

ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄՈՍԻԿՅԱՆ ԿԱՐԻՆԵ ԱՐՏՈՒՇԻ

**ՆԵՄԵՍԻՈՍ ԵՄԵՍԱՑՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ ԵՒ ԴՐԱՆՑ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄՏՔԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ**

**Ձ. 00.01- Փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2023

Ասենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ Փիլիսոփայության և
հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝

Փիլիսոփայական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Զաքարյան Ս. Ա.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Փիլիսոփայական գիտությունների
դոկտոր Թյոսեյան Հ. Հ.

Փիլիսոփայական գիտությունների
թեկնածու Վարդազարյան Օ. Ս.

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2023 թ. սեպտեմբերի 20-ին, ժամը 14. 00 - ին
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում գործող ՀՀ ԲՈԿ-ի
Փիլիսոփայության և սոցիոլոգիայի 013 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52ա, ԵՊՀ 8-րդ մասնաշենք:

Ասենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023թ. օգոստոսի 11-ին:

Փիլիսոփայության և սոցիոլոգիայի 013 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար, փիլիսոփայական
գիտությունների թեկնածու

Մանուկյան Ե. Կ.

Հեղագործության արդիականությունը: Արդի պայմաններում ազգերի ու պետությունների միջև միջմշակութային կապերի ու հարաբերությունների խորացումը և յուրաքանչյուր ազգի ինքնության ու մշակութային դիմագծի ինքնատիպության պահպանումը ենթադրում է ազգային մշակութային ավանդույթների, ակունքների, պատմական դրսւորումների, մշակութային փոխառնչությունների բազմակողմանի ուսումնասիրություն: Նմանատիպ հետազոտությունները կոչված են ընդլայնելու մեր պատկերացումները ոչ միայն տվյալ ազգի հոգևոր մշակույթի զարգացման տարբեր փուլերի, այլև քաղաքակրթական ընդհանուր դաշտում գտնվող տարբեր ազգերի մշակութային, ի մասնավորի փիլիսոփայական փոխառնչությունների վերաբերյալ: Առավել ևս եթե հետազոտության առարկա է դասնում անցյալի այնպիսի ժամանակաշրջան, որն իր բնութագրերով բազում առում նման է ժամանակակից աշխարհում տեղի ունեցող իրողություններին (անցումային հասարակություն, համաշխարհայնացման գործընթաց՝ քրիստոնեական կրոնի տարածում, աշխարհայացքային ու գաղափարական ճգնաժամ, միջմշակութային փոխառնչությունների խորացում և այլն): Անցումային այս շրջանում հանդիս եկան այնպիսի մտածողներ, ովքեր իրենց երկերում փորձում էին անտիկ գիտափիլիսոփայական ժառանգությունը փոխանցել նոր ձևավորվող քրիստոնեական մշակույթին: Հենց այս շրջանի ծնունդը կ Նեմեսիոս Եմեսացու «Մարդու բնության մասին» երկը, որում հեղինակը մի կողմից տարբեր հարցերի քննարկման ընթացքում ներկայացնում է անտիկ ու վաղ միջնադարյան բնագիտական, բնափիլիսոփայական և մարդաբանական հիմնական ուսմունքները, մյուս կողմից դրանց առանցքային գաղափարները հմաստավորում և գնահատում քրիստոնեական կրոնի սկզբունքների տեսանկյունից: Նեմեսիոս Եմեսացու «Մարդու բնության մասին» երկը, որ ներկայացնում է բնափիլիսոփայական ու մարդաբանական գիտելիքի պատմական ուղին անտիկից մինչև վաղ քրիստոնեական շրջան, թարգմանվելով հայերեն, դարձավ բնափիլիսոփայական ու մարդաբանական գիտելիքների աղբյուր նաև միջնադարյան հայ փիլիսոփայության համար: Որպես Նեմեսիոսի գրքի նկատմամբ հետաքրքրության ապացուց՝ հայ մատնագրության մեջ պահպանվել են բազմաթիվ լուծումներ, պատճառներ, մեկնություններ, ծաղկաքաղեր, որոնք հարստացրել են հայ բնափիլիսոփայական ու մարդաբանական միտքը՝ նպաստելով հայ իրականության մեջ այդ ոլորտների գարգացմանը: Նեմեսիոսի բնագրի հայերեն թարգմանության ու դրա մեկնությունների ուսումնասիրությունը կարևոր է նաև հայ բնափիլիսոփայական ու մարդաբանական մտքի վրա անմիջական ազդեցություն ունեցող սկզբունքների հայտնաբերման ու դասակարգման առումով: Միջնադարյան հայ գիտափիլիսոփայական գրականության համատեքստում Նեմեսիոսի երկի վերլուծությունը հնարավորություն է տալիս մեզ այսօր ավելի լավ պատկերացնելու հնչան վաղ միջնադարի փիլիսոփայական մտքի զարգացման միտումները, թարգմանական գրականության ազդեցության հետևանքները, այնպես էլ հույն-հայկական մշակութային և փիլիսոփայական փոխառնչությունները:

Գիտատեսական մշակվածության աստիճանը: Նեմեսիոսի «Մարդու բնության մասին» գրքի վերաբերյալ կան բազմաթիվ հետազոտություններ: Այս երկի բնագիրը հրատարակվել և վերահրատարակվել է տարբեր լեզուներով: Հունարեն սկզբնափիրը Ք. Ֆ. Մատթեի հրատարակությամբ երկար ժամանակ ուղեցոյց էր հետազոտողներից շատերի համար¹: Մ. Մորանի հրատարակած նորագոյն բնագիրը համեմատված է նաև հայերեն և մի շարք այլ հին թարգմանությունների հետ²: Նեմեսիոսի գիրքը փիլիսոփայական, աստվածաբանական և պատմական տեսանկյուններից վերլուծել և գնահատել են Բելարմինը, Ի. Ասեմանին, Դեմերանդոն, Դ. Բննիքը, Ֆ. Վաղիմիրսկին, Մ. Վ. Թեֆերը, Ա. Լուսկը, Կիպրիանոսը (Կեռն) և ուրիշներ³: Բնագիտական ու բժշկագիտական բնույթ ունեն Եվանգելիչների, Բ. Դոմանսկու, Ա. Դարովսկու հետազոտությունները⁴:

Նեմեսիոս Եմեսացու երկը, որը հայերեն է թարգմանվել VIII դարում, գտնվել է նաև հայ մտածողների և հետազոտողների ուշադրության կենտրոնում: Հայերեն բնագիրն առաջին անգամ հրատարակվել է 1889թ. Աթանաս Տիրոյեանի հոգածությամբ⁵: Այն կազմվել է Վենետիկյան Մատենադարանի վեց ձեռագրերի համեմատության հիման վրա: Մինչ այդ (1887-1888թթ.) դարձյալ Ա. Տիրոյեանի նախաձեռնությամբ «Բնագմավեպում» տպագրվել էին բնագրի տասնմեկ գլուխները՝ նախորդող գեկուցմամբ⁶: Բնության գրքի հայերեն հնագոյն թարգմանությանը կարևոր անդրադարձ են կատարել իտալացի հայագետներ Ա. Թեզեսուը (1469-1540)⁷ և Զ. Բոլոնիեզին (1923-2006)⁸: Բնվանդակային առումով այն ուսումնասիրել են Լ. Հովհաննիսյանը⁹, Ավ. Տեր-Պողոսյանը¹⁰, Ս. Վարդանյանը¹¹: Նեմեսիոսի գրքի հայերեն բնագրին թուուցիկ

¹ Տե՛ս Nemesius Emesenus, De natura hominis graece et latine, Migne, Patrologiae cursus completes, series graeca, t.40, 1858:

² Տե՛ս Nemesii Emesenii, De natura hominis, ed. Moreno Morani, Leipzig, 1987.

³ Տե՛ս Telfer W. Cyril of Jerusalem and Nemesius of Emesa, ed. by William Telfer, 1955.

⁴ Տե՛ս Evangelides, Zwei Kapitel aus einer Monograph. Über Nemesius und seine Quellen, Berlin, 1882; Domanski B., Die psychologie des Nemesius, Muuster, 1900; **Даровских А.**, Немесий Емесский о формировании человеческого тела. Между античной философией и медициной, «Проблемы становления философской антропологии в византийский период», М., 2013:

⁵ Տե՛ս Նեմեսիոսի փիլիսոփայի Եմեսացու Յաղագու բնութեան մարդոյ, Վենետիկ, 1889:

⁶ Տե՛ս Տիրոյեան Ա., Նեմեսիոս Ե. նորա Յաղագու բնութեան մարդոյ գրոց հայկական հին թարգմանութիւնն. Զեկուցումն. Բազմավէպ, հ. Խե. Վենետիկ, 1887, էջ 318-319:

⁷ Տե՛ս Նեմեսիոսի գիրքը և Դէզա իտալացի հայագիտին ուսումնասիրութիւնն. Բազմավէպ, Վենետիկ, 1892, էջ 442-444 և 477-782:

⁸ Տե՛ս Բոլոնիեզի Զ., Հունարեն բնագրերի հին հայկական թարգմանությունների նշանակությունն ու արժեքը. ՊԲՀ, 1979/2, էջ 54-61:

⁹ Տե՛ս **Օգանեսյան Լ.**, История медицины в Армении с древнейших времен до наших дней, в 5 ч-ях, ч 1, Ер., 1946:

¹⁰ Տե՛ս Տեր-Պողոսյան Ա., Բիլորգիական մտքի զարգացումը Հայաստանում, Եր., 1960, էջ 182-183:

¹¹ Տե՛ս Ս. Գրիգոր Նիւսացի. Տեսութիւն ի մարդոյն կազմութեան, աշխ.՝ Ս Վարդանյանի, Էջմ., 2008:

անդրադարձել են նաև Գ. Զարքիանայանը¹², Ա. Սուֆրին¹³, Հ. Տաշյանը¹⁴, Ս. Սոմալեանը¹⁵, Լ. Խաչիկյանը¹⁶: Զուգահեռներն ու առնչակցությունները միջնադարյան հայ հեղինակների երկերի հետ ներկայացրել են Ա. Թամրազյանը, Գ. Մոլբադյանը Ս. Զաքարյանը¹⁷: Մասամբ անդրադարձ է եղել նրա բժշկագիտական և հոգու մասին պատկերացումներին: Հայագետներից ոմանք ուսումնասիրել են (հիմնականում քննադատելով) երկի հայերեն թարգմանության բառակազմը:

Անուրանայի համարելով հայագիտության բոլոր այն երախտավորների աշխատանքները, որոնք իմբ են դրել թեմայի հետագա ուսումնասիրության համար (Ա. Տիրոյեան, Յ. Տաշյան, Ա. Սուֆրի, Գ. Զարքիանայան, Կ. Մոլբադյան, Լ. Հովհաննիսյան, Ավ. Տեր-Պողոսյան, Ս. Վարդանյան, Ջ. Բոլոնիեզի, Ա. Թեզեսու և այլն), միևնույն ժամանակ ակտոսանք պիտի հայտնենք, որ ձեռագրային այդպիսի մեծ ժառանգության (ավելի քան 40 ձեռագիր) և միջնադարյան նշանավոր հայ մատենագիրների ու փիլիսոփաների երկերում այդքան մեծածավալ ներկայացվածության պայմաններում, ընդհանուր առմամբ Նեմեսիոսի երկը, հատկապես փիլիսոփայապատմական տեսանկյունից՝ չափազանց քիչ է ուսումնասիրված: Հայ փիլիսոփայության պատմաբանները չեն լրաբանել Նեմեսիոսի փիլիսոփայական հայացքները, չեն բացահայտել դրանց ազդեցությունը միջնադարյան հայ փիլիսոփայության, ի մասնավորի բնափիլիսոփայության, մարդաբանության և փիլիսոփայական եզրաբանության ձևավորման ու զարգացման պատմական ընթացքի վրա: Մինչև այժմ անբավարար է ուսումնասիրված նաև միջնադարյան հայ փիլիսոփայական մտքի ձևավորման և զարգացման սկզբնադրյությունների հարցը:

Հետպատճեն նպագակն ու խնդիրները: Սույն հետազոտության գլխավոր նպատակն է վերլուծել Նեմեսիոս Եմեսացու փիլիսոփայական հայացքները և ցույց տալ դրանց ազդեցությունը միջնադարյան հայ փիլիսոփայական մտքի զարգացման վրա: Դրա իրագործման համար հարկավոր էր լուծել հետևյալ խնդիրները՝

- ներկայացնել Նեմեսիոս Եմեսացու երկի բովանդակությունը, կառուցվածքը, ըննարկված հարցերը.

¹² Տե՛ս Զարքիանայան Գ. Հայկական թարգմանութիւնք նախնեաց, Վենետիկ, 1889, Էջ 628-631:

¹³ Տե՛ս Սուֆրի Ա., Նեմեսիոսի մարդակազմութեան գրոց եւ անոր հայ թարգմանութեան ճաշակ մը, Քաղմական, Լ.Ը, Վենետիկ, 1880, Էջ 326-340:

¹⁴ Տե՛ս Տաշյան Յ., Նեմեսիոսի՝ Յաղագ բնութեան մարդոյ, ՀԱ, 1892, Էջ 65-71:

¹⁵ Տե՛ս Սոմալեան Ս., Պատկեր այլ և այլ հեղինակաց գործոց ի հնուց թարգմանելոց ի հայ. Վեն., 1829:

¹⁶ Տե՛ս Խաչիկյան Լ., Հայ բնագիտական միտքը 14-18-րդ դարերում, ՊԲՀ, 1971/2, Էջ 23-24:

¹⁷ Տե՛ս Թամրազյան Ա., Էսաներ և ուսումնասիրություններ, Եր., 2013; Մոբոց վարդապետաց

Հայոց Մովսէսի և Դավթ Հարցմոննք ըստ երկարնակաց, ՀԱ, 1903, Էջ 155: Տե՛ս ՄՀ, հ. ԺԷ, Եր., 2016, յաւելուած, Էջ 618: Քնն. բնագիրը և առաջ՝ Գ. Մոլբադյանի: Զաքարյան Ս., Նեմեսիոս Եմեսացի և Հովհանն Որոտնեցի (փիլիսոփայական առնչություններ), ԲԵՀ, Հայագիտություն, 2017, N3 (24), Էջ 3-19:

- լուսաբանել Նեմեսիոսի բնափիլիսոփայական և մարդաբանական հայացքները, ցոյց տալ դրանց կապը անտիկ փիլիսոփայության և աստվածաշնչյան ու վաղ քրիստոնեական պատկերացումների հետ,

- բացահայտել Նեմեսիոսի՝ իբրև հանրագիտակ փիլիսոփայի, դերը թե՛ առհասարակ միջնադարյան փիլիսոփայության և թե՛ ի մասնավորի՝ հայ փիլիսոփայության զարգացման գործում,

- հետազոտել գրքի հայերեն թարգմանության ժամանակը, հանգամանքները, բառակազմը,

- վերլուծել երկի միջնադարյան հայերեն մեկնությունները, պարզել հայ մեկնիչների վերաբերմունքը, բնագրի հետ համեմատել տարբերվող հատվածները, սուուգաբանել ու պարզաբանել մեկնություններում գործածված փիլիսոփայական եզրույթները,

- ցոյց տալ երկի ներկայացվածությունը հայ մատենագիրների և փիլիսոփաների երկերում:

Նշված խնդիրների լուծման համար օգտագործվել են մեծ թվով սկզբնաղբյուրներ՝ հայերեն բնագրի տասներեք հնագույն օրինակ, որոնք համեմատել ենք նաև հունարեն երկու բնագրի հետ, երկի հայերեն մեկնությունների չորս տարբերակ, և բազմաթիվ միջնադարյան հայ մատենագիրների ստեղծագործություններ՝ դրանցում Նեմեսիոսի երկի հետ կապը հայտնաբերելու համար:

Հետազույթյան գիրական նորույթը: Հայ փիլիսոփայապատմական գրականության մեջ առաջին անգամ հանգամանորեն ուսումնասիրելով Նեմեսիոս Եմեսացու «Մարդու բնության մասին» երկի փիլիսոփայական գաղափարները և դրանց ազեցությունը հայ միջնադարյան փիլիսոփայության զարգացման վրա, ատենախոսության մեջ առաջադրվում են գիտական նորույթ ներկայացնող հետևյալ դրույթները՝

- Հիմնավորվում է այն միտքը, որ Նեմեսիոսին վերապահումով կարելի է համարել Էկլեկտիկ մտածող որովհետևն՝ նախ, թեև նորա գրքում ներկայացված են միևնույն հարցի վերաբերյալ տարբեր տեսակետներ, սակայն նա դրանց հիման վրա չի ստեղծում փիլիսոփայական տեսություն, երկրորդ, նրա փիլիսոփայական հայացքների հիմքում ընկած են Հայունության ճշմարտությունները, որոնց լույսի ներքո էլ նա գնահատում է դիտարկվող անտիկ և վաղ միջնադարյան ուսմունքները.

- Վեր է հանվում և վերլուծվում այն հանգամանքը, որ թեև Նեմեսիոսը հետևում է աստվածաշնչյան ճշմարտություններին, այնուհանդերձ նրա հայացքներում գերակշռում է բանապաշտական մոտեցումը, իսկ ընթիանուր առմամբ նա ձգտում է անտիկ բանապաշտական ավանդույթի որոշ տարբեր համադրել քրիստոնեական հավատքի սկզբունքների հետ, իսկ կրոնական ճշմարտությունները ըստ հարկի հիմնավորել ուցինալ փաստարկներով,

- Պաշտպանելով արարշագործության սկզբունքը, Նեմեսիոսը միաժամանակ արարված աշխարհի երկույթների լինելիության ընթացքը փորձում է բացատրել բնական ճանապարհով՝ օգտագործելով բնաշրջական գործընթացին բնորոշ եզրույթներ:

Միաստվածակենտրոնության հիմքի վրա նա հիմնավորում է տիեզերքի մասերի փոխկապվածության ու բոլոր արարածների «ազգակցության» գաղափարը:

- Նկատի ունենալով, ինչպես Նեմեսիոսի գրքի հայերեն բնագրի ներկայացվածությունը միջնադարյան հայ փիլիսոփաների երկերում, այնպես էլ հայ հեղինակների բազմաթիվ անանոն մեկնությունները, հիմնավորվում է, որ Նեմեսիոսի երկի հին հայերեն թարգմանությունը՝ ա) էական ազդեցություն է ունեցել միջնադարյան հայ փիլիսոփայական, ի մասնավորի բնափիլիսոփայական, մարդաբանական՝ հոգեբանական ու բնախոսական մտքի զարգացման վրա, բ) հանդիսացել է անտիկ գիտափիլիսոփայական ժառանգության փոխանցման և դրա ներմշակութացման ու յուրացման սկզբնաղբյուր, գ) հարստացրել է հայերեն փիլիսոփայական լեզուն նոր արտահայտություններով:

- Ներկայացնելով «Մարդու բնության մասին» երկի հայերեն անանոն մեկնությունները, առաջադրվում է այն միտքը, որ դրանցում նկատելի է Նեմեսիոսի գաղափարների նկատմամբ վերաբերմունքի տարբեր ձևեր. մի դեպքում հայ մտածողները վերաշարադրում են բնագրից հատվածներ՝ խրթին ձևակերպումների դյուրացված վերապատմումով կամ բացատրությամբ, մի այլ դեպքում հավեյալ նյութի ներառմամբ՝ ծավալուն, մասամբ ինքնուրույն վերլուծության առարկա են դարձնում աշխարհայացքային կարևոր նշանակություն ունեցող որևէ դրույթ: Երբեմն էլ հայ հեղինակներն իրենց հայեցողությամբ խմբավորում են բնագրային հատվածները՝ իմաստային շեշտադրումներ կամ հետևողություններ անելու նպատակով, դրանք գուգահեռելով աստվածաշնչան հիմնավորումների կամ այլ մտածողների մտքերի հետ:

Պաշտպանության ներկայացված դրույթները: Պաշտպանության է ներկայացվել հետևյալ տեսական դրույթները.

-Միջնադարյան փիլիսոփայության մեջ Նեմեսիոս Եմեսացու գրքի նշանակությունն այն է, որ դրա միջոցով անտիկ և վաղ միջնադարյան գիտափիլիսոփայական ժառանգությունը «փոխանցվել» է քրիստոնեական մշակույթ, դարձել տեսական կարևորագոյն սկզբնաղբյուր հատկապես միջնադարյան մարդաբանական (բնախոսական, հոգեբանական) մտքի համար,

-Անվերապահ ընդունելով աստվածային Հայտնության ճշմարտությունները, Նեմեսիոսը անհրաժեշտության դեաքրում դրանք հիմնավորում է անտիկ փիլիսոփայական տեսություններով, և հակառակ՝ գիտական դրույթների ճշմարտացիության հաստատման կամ հերքման ընթացքում իբրև փաստարկ երբեմն օգտագործում է Հայտնության ճշմարտությունները.

-Նեմեսիոսը պաշտպանում է քրիստոնեական մարդակենտրոնության գաղափարը, ըստ որի մարդն իր բնությամբ, տեղով ու դերով բացահի կարգավիճակ ունի արարված տիեզերքում: Մարդը Փոքր աշխարհ է, Մեծ աշխարհի «համառոտագիրը», որն իր մեջ խտացնում է գոյի բոլոր շերտերը՝ աննյութականն ու նյութականը, զգային և իմանալին,

-Նեմեսիոսի հանրագիտարանային բնույթի երկը, որը համառոտ ներկայացնում է բնափիլիսոփայական և մարդաբանական գիտելիքի զարգացման պատմական ուղին անտիկից մինչև վաղ քրիստոնեական շրջան, Միջնադարյան Հայաստանում նույնպես

դարձել է անտիկ ուսմունքները գիտական միջավայր ներմուծող հիմնական աղբյուրներից մեկը: Գրեթե բոլոր միջնադարյան հայ մտածողները (Հովհաննես Սարկավագ, Հովհաննես Պլուզ Երզնկացի, Հովհան Որորտնեցի, Գրիգոր Տաթևացի և այլք) իրենց Երկերում օգտագործել են այդ գրքի բնափիլսոփիայական, բնախոսական, հոգեբանական գաղափարները:

- Բնագրի բազմաթիվ կտորներ համեմատելով միջնադարյան հայ հեղինակների մեկնությունների ու լուծումների հետ, փորձ է արվում դրանց միջոցով պարզաբանել նեմեսիոսյան տարբեր արտահայտություններ, հասկացություններ և ծևակերպումներ: Հայ հեղինակների անանուն մեկնություններից բերված բացատրություններով լրացվել և պարզաբանվել են բնագրային բազմաթիվ եզրույթներ՝ դրանով իսկ ընդլայնելով մեր պատկերացումները միջնադարյան փիլսոփիայական Երկերում գործածված հասկացությունների վերաբերյալ:

- Ցոյց է տրվում, որ Նեմեսիոսի բնագրի հին հայերեն թարգմանությունում առկա են հունարենից պատճենված բազմաթիվ հաջող նորամուծություններ, որոնցից շատերը կայունանալով՝ պահպանվել են մինչև այսօր,

- Մեկնություններում հայ հեղինակների ինքնուրույնության որոշակի աստիճանը, և նրանց ներկայացրած հավելյալ տեղեկությունները թույլ են տալիս ենթադրել միջնադարյան Հայաստանում փիլսոփիայական, և ի մասնավորի՝ բնափիլսոփիայական գիտելիքի նշանակալի տարածվածության մասին:

- Նկատի ունենալով ինչպես միջնադարյան գիտական շրջանակներում Նեմեսիոսի գրքի պահանջված լինելու և իբրև մարդարանության դասագիրք գործածվելու փաստը, այնպես էլ հայ հեղինակների մեկնություններն ու Երկի ծավալուն ներկայացվածությունը միջնադարյան հայ մոտածողների Երկերում, հիմնավորվում է, որ Նեմեսիոսի գիրքը էական նշանակություն է ունեցել հայ փիլսոփայության, ի մասնավորի մարդարանական և բժշկագիտական մտքի զարգացման գործում:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Ատենախոսությունը շարադրելիս օգտագործվել են փիլսոփայապատմական նյութի վերակազմության, պատմական և տրամաբանական, համադրական-համեմատական և համակարգային վերլուծության մեթոդներ: Օգտագործվել են նաև մարդարանության ոլորտում կիրառվող նորագույն մեթոդներ՝ հնագույն գիտելիքի զարգացմանը հետևելու, և դրանց նորագույն դրսերումների հիմքերը գտնելու համար: Հետազոտության համար տեսական-մեթոդաբանական հիմք են հանդիսացել միջնադարյան փիլսոփայությանը և աղբյուրագիտությանը նվիրված ուսումնասիրությունները:

Այբենախոսության դեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսությունն ունի և տեսական և գործնական նշանակություն: Հետազոտությունը հնարավորություն կտա ավելի ամբողջական պատկերացում կազմելու միջնադարյան հայ փիլսոփայական մտքի, փիլսոփայական Երաբանության ծևակվորման ու զարգացման, հայ-հունական մշակութային-փիլսոփայական կապերի մասին: Հետազոտության արդյունքները հավաքված ու վերլուծված տեսական և պատմական նյութը կարող են օգտագործվել միջնադարյան բնափիլսոփայական ու մարդարանական մտքի հետագա

ուսումնասիրությունների ժամանակ: Ատենախոսության նյութը կարող է ներառվել փիլիսոփայական, փիլիսոփայապատմական («Հայ փիլիսոփայության պատմություն»), մշակութարանական և բնագիտական բնույթի բուհական դասընթացներում:

Ապենախոսության փորձաքննությունը: Ատենախոսության հիմնական գաղափարներն առաջին անգամ քննարկվել են Մատենադարանում Սիրարփի Տեր-Ներսեսյանի 120-ամյակին նվիրված գիտաժողովի ընթացքում (2019թ. դեկտեմբերին): Ամբողջ շարադրանքը երկու անգամ քննարկվել (2022թ. դեկտեմբերին և 2023թ. հունվարին) և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնում: Ուսումնասիրության առանցքային դրույթներն արտացոլված են հեղինակի հրատարակած երկու մենագրություններում և հինգ հոդվածներում:

Ապենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից (4 և 3 ենթագլուխ), եղակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատության ծավալը 186 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈԴ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է հետազոտվող թեմայի արդիականությունը, մշակվածության աստիճանը, ծևակերպվում են հետազոտության նպատակը, խնդիրները, մեթոդաբանական սկզբունքները: Ներկայացվում են ատենախոսության գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսության տեսական ու գործնական նշանակությունը:

Առաջին գլուխը՝ «Նեմեսիոս Եմեսացու փիլիսոփայական և մարդաբանական հայացները», նվիրված է Նեմեսիոս Եմեսացու կենսագրության, նրա «Մարդու բնության մասին» երկի բովանդակության, կառուցվածքի և հիմնական գաղափարների վերլուծությանը:

«Նեմեսիոս Եմեսացու «Մարդու բնության մասին» երկը» ենթագլուխ ներկայացվում են Նեմեսիոս Եմեսացու մասին եղած սուր կենսագրական տվյալները:

Հետազոտողների կարծիքով՝ նա ապրել ու ստեղծագործել է կամ IV դարում, կամ՝ մինչև V դարի սկզբները: Սակայն հիմք ընդունելով այն փաստը, որ Նեմեսիոսն իր գրքում վերլուծում է «հերձվածողներ» Ապողինարիոս Լաոդիկացու և Եվլումիոսի հոգու մասին տեսակետները, բայց քրիստոնական և մարդաբանական (օրինակ, կամքի ազատության) հարցեր քննարկելիս չի հիշատակում V դարի սկզբներին արևելաբրիստոններական աշխարհի միտքը փոթորկած Եվլումիոսի, Նեստորի և Պելագիոսի անոնները, ենթադրվում է, որ իր երկը նա գրել է IV դարի վեջերին: Ըստ որոշ տեղեկությունների՝ նա եղել է հեթանոս գիտանական և Գամրաց (Կապադովկիայի) կուսակալ, որին քրիստոնեություն է քարոզել Արևելյան Եկեղեցու հայր, նշանավոր աստվածաբան Գրիգոր Նազիանզացին: Հայտնի է նաև, որ Նեմեսիոսը եղել է Եմեսա (Ներկայում սիրիական Հռոմ) քաղաքի եպիսկոպոս: «Մարդու բնության մասին» երկը նրա միակ հայտնի գործն է, թեպես հիշատակվում է նաև դրախտային այգու և առաջին մարդու մեղսագործության մասին՝ «Վասն ծառոյն կենաց» վերնագրով կորուսյալ աշխատության մասին:

«Մարդու բնության մասին» երկը հունարեն բնագրում ներկայացված է 44, իսկ հայերենում՝ 42 գլուխներով, որոնցում բննարկվում են տիեզերքին և առավելապես մարդու կարգավիճակին, նրա բնությանը, հոգեմարմնական հատկություններին, ճանաչողության բնական միջոցներին, իմացական ունակություններին, անձնիշխանությանն ու ճակատագրին առնչվող փիլսոփիայական, հոգեբանական, իմացարանական, բնախոսական, բժշկագիտական ու բարոյագիտական հարցեր: Նեմեսիոսի երկը յուրօրինակ դասագիրը է, հանրագիտարան, որում, ի տարբերություն Գրիգոր Լյուսացու «Մարդու կազմության մասին» աշխատության, մեկտեղված և համեմատված են տարբեր փիլսոփաների կարծիքներ, դիտարկված են տարբեր տեսակետներ: Այս առումով Նեմեսիոսը ոչ թե էկլեկտիկ, այլ ավելի շուտ հավաքարան մտածող է, ով համարում ներկայացնելով անտիկ և վաղ միջնադարյան նշանավոր փիլսոփաների մոտեցումները մարդարանական և բնափիլսոփայական տարբեր հարցերի վերաբերյալ, դրանով իսկ միջնադարյան քրիստոնեական մշակույթ է փոխանցել անտիկ և վաղ միջնադարյան գիտափիլսոփայական ժառանգության գգայի մասը: Իր երկում նա ջանում է Հայտնության ճշմարտությունները հիմնավորել բանապաշտական փաստարկներով՝ ծգտելով հաշտության եզրեր գտնել փիլսոփայական և կրոնական ավանդույթների միջև: Լինելով հոգևորական, այդուհանդեմ, Նեմեսիոսը ոչ թե կրոնական գաղափարների քարոզիչ է, այլ բանապաշտության և փիլսոփայական-տրամաբանական վերլուծության կողմնակից:

«**Նեմեսիոս Եմեսացու բնափիլսոփայական հայացքները**» ենթագիսում վերլուծվում են Նեմեսիոսի տիեզերագիտական, բնափիլսոփայական և տարրաբանական հայացքները: Նա պաշտպանում է արարագործության գաղափարը՝ ըստ որի Աստված ոչնչից ստեղծել է տիեզերքը, կեցություն պարգևել բոլոր գոյերին, այդ թվում մարդուն: Հետևելով Ապոլինարիոսին՝ նա ընդունում է «Անդունդի» գաղափարը, որն, ըստ Էտիվան առաջնաստեղծ, անձն ու անորակ նյութն է, և որն Արարիչն արարել է բոլոր մարմնականներից ավելի վալ՝ «ի սկզբանէ»: Արարված տիեզերքը ներկայացնելով որպես մի կենսանի ամբողջություն՝ նա առանցքում դնում է բնության համընդհանուր օրենքների գերակայությունն ու խիստ նպատակային կարգուկանուր: Նեմեսիոսի բնափիլսոփայության ուշագրավ գաղափարն այն է, որ արարագործության ընդունման համընթաց նա նկարագրում է գոյերի լինելիության և կազմավորման ընթացքը, որը տեղի է ունենում Երկարատև բնաշրջման (Էվոլյուցիայի) ճանապարհով: Ստորակա նյութից ստեղծված արարածները բնությամբ փոփոխելի են: Եվ դրանց փոփոխելիության, մի վիճակից մյուսին փոխակերպման հատկությունն է ընկած բնաշրջման հիմքում: Ամեն ինչ տեղի է ունենում բնական ճանապարհով, ընդ որում, այդ փոփոխություններն ենթադրում են բազում միջանկյալ օղակների գոյությունը: Այսինքն՝ բնաշրջման գործընթացն ունի աստիճանական բնույթը: Նեմեսիոսն, ըստ Էտիվան, նկարագրում է գոյերի բնական հաջորդական լինելիության մասին արիստոտելյան հայեցակարգը, որ կոչվում է Արիստոտելյան կամ գոյերի սանդուղը:

Տիեզերքի մասերի փոխակապվածությունն ու բոլոր արարածների «ազգակցությունը» նա ներկայացնում է իրեն մեկ համընդհանուր Աստծո կողմից նրանց բոլորի արարման ապացուց:

Տարրերի մասին իր շարադրանքում նա վերլուծում է Դեմոկրիտեսի, Պլատոնի, Արիստոտելի, ստոիկների տեսակետները՝ փորձելով դրանց հիման վրա խարսխել իր տարրաբանական ըմբռնումները: Երկնային մարմինները բաղկացած են եթերից, իսկ երկրային իրերը՝ չորս տարրերից՝ հողից, ջրից, օդից և հորից, որոնք ունեն իրենց բնորոշ հատկությունները: Այդ տարրերը անհատելի են և չեն ոչնչանում (Դեմոկրիտես), ունեն իրենց բնորոշ որակական հատկությունները՝ ջերմության, սառնության, խոնավության ու չորության, ընդամին հակադիր որակների միավորումը տեղի է ունենում միշանկյալ որակների միջոցով (Արիստոտել): Ստոիկներից նա վերցնում է տարրերի ներգործական և կրավորական հատկությունների մասին գաղափարը: Նա պաշտպանում է տարրերի մշտական շրջապտույթի մասին գաղափարը՝ մարմինները կազմավորվում են տարրերից, իսկ դրանք ոչնչանում են տարրերի անջատումից հետո: Տիեզերքը ներկայանում է լինելիության հավերժական մի ընթացք՝ գոյացման ու քայլայման շրջապտույթի ձևով: Նեմեսիոսի պատկերացմամբ՝ տիեզերքում ամենուր թագավորում է համաշխափությունը, ներդաշնակությունը և նպատակահարմարությունը՝ իբրև բնական հետևանք աշխարհաստեղծ բանական Պատճառի:

«Մարդու բնությունը, կարգավիճակը և տեսակային հատկությունները» ենթագլուխը նվիրված է մարդու, տիեզերքում նրա առանձնահատուկ տեղի և դերի, մարդու տեսակային հատկությունների նեմեսիոսյան ըմբռնումների վերլուծությանը: Պաշտպանելով քրիստոնեական մարդակենտրոնության գաղափարը՝ նա մարդուն դիտում է ոչ միայն արարչագործության գլուխգործոց և արարվածների թագավոր, այլ Փոքր աշխարհ, որը Մեծ աշխարհի հանրագումարն է և մանրակերտը: Մարդուն տեղակայելով տիեզերքի կենտրոնում, Նեմեսիոսը նրան ներկայացնում է իբրև կեցության բոլոր շերտերը շաղկապող էակ, որը մի կողմից «ազգակից» է արարվածներին, մյուս կողմից՝ Աստծոց տրված հոգու շնորհիվ, իր բանականությամբ ու անձնիշխանությամբ գերազանցում է դրանց: Մարդը հոգու և մարմնի ներդաշնակ միասնություն է, գեղեցիկ թե՛ իր կազմվածքով և թե՛ իր անդամների գործառությամբ: Չնայած մեղսագործության՝ մահկանացու մարդու իր հոգևոր ունակությունների շնորհիվ կարող է կատարելագործվել և վերագտնել իր բնության անմահությունը: Դրա համար անհրաժեշտ է՝ մի կողմից ճանաչել ու ըմբռնել գոյի խորհուրդը, բացահայտել իրերի էությունը, ձգտել ինքնաճանաչողության և աստվածիմացության, մյուս կողմից՝ առաքինությամբ անցնել կյանքի ուղին, առաջնորդվել բարոյականության կանոններով և խուափել մեղքերից: Իսկ դրա իրագործման ամենակարևոր պայմանը չափավորության, օգտակարի և վնասակարի, թույլատրելիի և անթույլատրելիի միջև փխրուն սահմանի պահպանում է:

Նեմեսիոսը, հենվելով արիստոտելյան մտքերի վրա՝ մարդուն սահմանում է որպես «կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց և մակացութեանց ընդունակ» և որպես հասարակական («քաղաքական») կենդանի: Նա մարդու հիմնական տեսակային հատկանշներից է համարում նրա ուղղաձիգ կազմվածքը (ի դեպ, այս միտքը հանդիպում ենք նոյն ժամանակաշրջանի տարրեր մտածողների՝ Բարսել Կեսարացու, Գրիգոր Նյուացու և այլոց երկերում): Օժտված լինելով բանականությամբ՝ մարդու

տեսակային հատկություններից է նաև Աստծո և գոյերի մասին խորհրդաձելու ունակությունը: Նեմեսիոսը քննարկում է իմացության բնական միջոցներին՝ զգայարաններին, բանականությանը, հիշողությանը, երևակայությանը, խոսքին, հոգու մասերին՝ բանականին, ցամանականին ու ցանկականին, և հոգեկական վիճակներին՝ հաճուքին, երկյուղին, տրտմությանը, մարդու բնախոսությանն (այս դեպքում նա օգտվում է Հիպոկրատեսի և Գալենոսի երկերից) աղերսվող հարցեր, որոնք լրացնում էին այդ գիտելիքների վերաբերյալ հայրաբանական գրականության մեջ առկա բացը: Մարդու բնախոսության և կազմախոսության վերաբերյալ նեմեսիոսյան գաղափարները նպաստեցին ոչ միայն փիլիսոփայական, այլև բժշկագիտական մտքի զարգացմանը:

Քննարկելով բանական մարդու անձնիշխանության և կամքի ազատության հարցը, Նեմեսիոսը քննադատելով ճակատագրապաշտական մոտեցումները, կարծում էր, որ հնարավոր չէ մարդուն պատկերացնել առանց բանականության և անձնիշխանության: Նոյնիսկ Աստծո կողմից մարդու խնամակալության համար նախատեսված «տիեզերական գործիքների» (քահան, ճակատագիր, նախախնամություն) ստեղծումը բնավ չի նշանակում մարդու անգործություն կամ սեփական որոշումները կայացնելու և սեփական խնդիրները լուծելու անկարողություն, ընդհակառակը՝ այդ ամենն ավելացնում է մարդու պատասխանատվությունը և նրան տալիս ստեղծագործելու ու կատարելագործվելու հնարավորությունը:

«Ուսմունքը հոգու մասին: Իմացաբանական ըմբռնումները» ենթագլուխ վերլուծվում են Նեմեսիոսի հոգեբանական և իմացաբանական ըմբռնումները: Հոգու վերաբերյալ իր տեղեկությունները նա հիմնականում քաղել է Արիստոտելի «Հոգու մասին» երկից: Ներկայացնելով հոգու մասին տարրեր մոտեցումներ, Նեմեսիոսը դրանք դասավորում է երկու մեծ խմբի մեջ՝ հոգին մարմնական համարողներ, և իբրև անմարմին էություն դիտարկողներ: Նեմեսիոսը՝ հենվելով փիլիսոփայական բնույթի փաստարկների վրա, պաշտպանում է հոգու անմարմին ու անմահ լինելու տեսակետը: Նա ընդունում է նաև հոգու նախագոյության մասին պլատոնյան միտքը, կարծելով՝ որ հոգուն գոյություն ունեն որոշակի բնածին գիտելիքներ, որոնք ակտիվանում են կյանքի ընթացքում՝ վերհույղ միջոցով: Նա զարմանայի երևոյթ է համարում հոգու և մարմնի միավորման հանգամանքը: Այդ սքանչելի միասնության մեջ հոգին՝ ամրացնելով և ամբողջական պահելով տրոհելի մարմինը, միևնույն ժամանակ ինքն ազատ է և, եթե ինչ-որ կերպ կապված է մարմնին, ապա միայն իր կամքով ու ցանկությամբ: Ըստ որում, մարմնին միավորված հոգին որպես ամբողջություն ունի մասեր կամ տեսակներ, որոնցով պայմանավորված են նրա տարրեր ունակությունները:

Նեմեսիոսը վերլուծում է Համատիեզերական հոգու մասին հերակլիտեսյան, պլատոնյան և մանիքեական ուսմունքները, Հիպոկրատեսի և Գալենոսի առաջարկած՝ խառնվածքի մասին տեսությունը, Արիստոտելի «Հնտելեսիայի» («կատարունության») գաղափարը, Պյութագորասի ու Քսենոկրատեսի կարծիքն այն մասին, որ հոգու էլությունը թիվն է և այլն: Նա անդրադառնում է նաև հոգու վերամարմնասպառման գաղափարին, ընդ որում գգուշանում է հայտնել հստակ դիրքորոշում՝ նախընտրելով շարաբրել այդ հարցի վերաբերյալ այլ փիլիսոփայական կարծիքները: Կարևոր են կրցերի և ներգործությունների, կամավոր և ակամա գործողությունների, արտաբերված և ներքին

խոսքի, արվեստ ստեղծելու մարդու մենաշնորհի, ճակատագրի և նախընտրության, նախախնամության և տիեզերական անհրաժեշտության մասին նեմեսիոսյան ըմբռումները: Զևակերպելով և ամրագրելով մարդու կերպարը, նրա հոգևոր և մարմնական կառուցքը, նրա բնական ու մշակութային շերտերը, նեմեսիոսը ներկայացնում է մարդու բնության ամբողջության, նրա նախաստեղծ գաղափարի պահպանման հնարավիրությունները:

Նեմեսիոսի երկի «Հոգու մասին» գլուխը ամենաշատն է ներկայացված հայ մատենագրության մեջ: Միջնադարյան հայերն ձեռագրերում այն հաճախ հանդիպում ենք առանձին վերլուծությունների տեսքով՝ երթեմն առանց հեղինակի նշման, երթեմն է՝ «Պատճառ բնութեան գրոց» վերտառությամբ: Հայ մատենագրիները հաճախ են մեցբերում հոգու բնության, հատկությունների, մասերի, դրանց գործառույթների, հոգեկան տարրեր երևույթների նեմեսիոսյան հակիրճ և դիպուկ ծևակերպումներն ու սահմանումները:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ ՆԵՄԵՍԻՈՍ ԵՄԵՍԱՑՈՒ «ՄԱՐԴՈՒ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԿԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ՏԵՍԱԿԱՆ-ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄՏԱՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Երկրորդ գլուխում ներկայացված են Նեմեսիոս Եմեսացու «Մարդու բնության մասին» երկի հայերեն հնագոյն թարգմանական բնագրի քննական ուսումնասիրությունը, որը 2019թ. իրատարակվել է ատենախոսության հեղինակի ձեռագրագիտական համեմատությամբ, ներածությամբ և ծանոթագրություններով: Ներկայացված են նաև հայ մատենագրության մեջ այս երկի բազմաթիվ «հետքերի», հայ հեղինակների մեկնությունների և հայերեն բնագրում տեղ գտած եզրույթների մանրամասն ստուգաբանումներ՝ պարզելու համար դրանց ազդեցությունը հայ գիտափիլիսոփայական մտքի զարգացման վրա:

«Մարդու բնության մասին» երկի հայերեն թարգմանությունը և մեկնությունները» ենթագլուխը երկի հայերեն բնագրի, թարգմանիչների, թարգմանության ժամանակի ու հանգամանքների մասին է: Այն, որ գիրքն հայերեն է թարգմանել Ստեփանոս Սյոնեցին (680-735)¹⁸ Դավիթ Հյուպատոսի օժանդակությամբ, VIII դարում, կարելի է գտնել ձեռագրերի մեծ մասում տեղ գտած թարգմանչաց հիշատակարանում կամ միջնադարյան որոշ պատմիչների երկերում¹⁸:

Նեմեսիոսի «Մարդու բնության մասին» երկի հայերեն բնագրի ձեռագիր ընդօրինակությունները բավական շատ են (մոտ 40): Դրանք աչքի են ընկնում ոչ միայն առատությամբ և հնությամբ, այլև միջնադարյան մշակութային հոչակավոր կենտրոններում (Պղնձահանք, Լով, Կապոս, Գլածոր, Մեծքար և այլն) և նշանավոր գրիչների կողմից ընդօրինակվելու իրողությամբ: Որպես գրիչներ, ստացողներ, վերականգնողներ կամ ենթադրյալ մեկնիչներ հանդես են գալիս մեր մատենագրության հայտնի անուններ՝ Գրիգոր Բջնեցի, Հովհաննես Սարկավագ, Սիմեոն Պղնձահանեցի,

¹⁸ Տե՛ս Օքքեան Ստ., արքեպիսկոպոս Սիմեոց, Պատմութիւն Նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 135:

Եսայի Նշեցի, Վարդան Կիլիկեցի, Գրիգոր Սկևորացի: Երկի ստեղծման հանգամանքներին վերաբերող հիշատակումներ կան բազմաթիվ հիշատակարաններում:

Հայտնի է, որ «Մարդու բնության մասին» Երկը միջնադարյան Հայաստանի վանական դպրոցներում օգտագործվել է որպես դասագիրք: Սակայն հունարան հայերենով թարգմանված Երկի խրժին ու դժվար ընկալելի բովանդակությունը պահանջում էր լրացուցիչ մեկնարանությաններ: Պահպանվել են Նեմեսիոսի գրքի միջնադարյան հայերեն մեկնությունների մի քանի տարբերակներ, որոնք իհմնականում անառնուն են: Ենթադրվում է, որ այդ տարբերակներից մեկի հեղինակը Գրիգոր Սկևորացին է: Նեմեսիոսի Երկի հայ մեկնիչները ոչ միայն վերապատմում են հեղինակի մորերը՝ պարզաբանելով խրժին ծևակերպումները, այլև ձգուում են մեկնարանել դրանք՝ լրացնելով իրենց հայտնի այլ տիեզերագիտական, աստվածաբանական, բնափիլիսոփայական, կենսաբանական, թժկական և ֆիզիոգնոմիկական տեղեկություններով: Դրանով իսկ հնարավոր է յինում պատկերացում կազմել հայ հեղինակների հետաքրքրությունների, ընդհանուր պատրաստվածության, նրանց գիտելիքների և այս կամ այն հարցի նկատմամբ նրանց սեփական մոտեցումների մասին: Համեմատելով բնագրի և մեկնությունների համապատասխան հատվածներ, ատենախոսությունում իհմնավորվում է այն միտքը, որ հայ մեկնիչները բնագրի նկատմամբ ցուցաբերել են տարբեր մոտեցումներ: Մի դեպքում նրանք վերաշարադրում են բնագրից հատվածներ՝ պարզեցնելով դրանց խրժին ծևակերպումները, մյուս դեպքում ներառում են հավելյալ նյութ՝ բնագրի բովանդակությունը լրացնելով այլ տեղերից քաղված սեփական տեղեկություններով: Երբեմն էլ վերլուծության առարկա են դարձնում աշխարհայացքային կարևոր նշանակություն ունեցող որևէ հասկացություն կամ արտահայտություն: Այլ խորքով, մեկնությունները բավական տեղեկություն են տալիս հայ մտածողների գիտական պատրաստվածության և նրանց գիտական կողմնորոշումների ու նախասիրությունների մասին: Այս մեկնությունները նույնպես վկայում են այն մասին, որ «Մարդու բնության մասին» Երկը տարածված է Եղել միջնադարյան ուսումնական կենտրոններում և կարևոր դեր է խաղացել հայ փիլիսոփայական մտքի զարգացման համար:

«Նեմեսիոսի «Մարդու բնության մասին» Երկի ազդեցությունը միջնադարյան հայ մտածողների հայացքների վրա» Ենթագլում ցոյց է տրվում այս գրքի տարածվածությունը հայ նշանավոր մատենագիրների և փիլիսոփաների Երկերում: Նեմեսիոս Եմեսացու «Մարդու բնության մասին» Երկը գիտելիքների կարևոր շտեմարան էր մարդաբանական և բնափիլիսոփայական հարցերով հետաքրքրվողների համար: Բանաձևային նշանակություն ստացած առանձին արտահայտություններ, անտիկ հեղինակների տեսակետների հակիրճ ծևակերպումներ՝ գրեթե անփոփոխ նեմեսիոսյան բառակազմով, հաճախ ենք հանդիպում հայ մատենագիրների Երկերում: Դրանք սովորաբար բերվում են ասելիքը իհմնավորելու, ըննարկվող նյութի մասին ամբողջական պատկերացում ստեղծելու, բնագրի մտքերը մատչելի ծևով ներկայացնելու նպատակով:

Վաղ միջնադարի (մինչև Երկի թարգմանության շրջան) որոշ հայ մտածողների (Դավիթ Անհաղթ, Անանիա Շիրակացի, Պետրոս Սյունեցի) գրվածքներում

նոյնպես նկատվում են Նեմեսիոսի երկից փոխառված առանձին մտքեր: Այդ հանգամանքը, ինչպես նաև մեկնություններում հայ հեղինակների ինքնուրույնության որոշակի աստիճանը, և նրանց ներկայացրած հավելյալ տեղեկությունները թույլ են տալիս Ենթադրել միջնադարյան Հայաստանում բնափիլիստիվայական գիտելիքների նշանակալի տարածվածության մասին:

Նեմեսիոսի երկի ներկայացվածությունը նկատելի է հատկապես միջնադարյան հայ փիլիսոփաների գրվածքներում: Իրենց երկերում Նեմեսիոսից ընդգրկուն մեջբերումներ են կատարել Հովի. Սարկավագը, Հովի. (Պլուտ) Երզնկացին, Հովի. Որոտնեցին, Գր. Տաթևացին, բժշկապետերից Ամիրողվաթ Ամասիացին, Հովասափ, Ասար, Բոնիաթ Սեբաստացիները. Գրիգորիսը և այլն: Նեմեսիոսյան դաստորդյունների հիման վրա է Հովի. (Պլուտ) Երզնկացին քննարկում և լրասրանում աշխարհում մարդու տեղի, դերի, նրա բանականության, ներքին մղումների և տվյալտանքի, սրտմտականի, ցանկականի, վախի, հեշտության և այլ հոգեկան երևույթների մասին հարցերը: Նրան ակնհայտորեն հետաքրքրում են նաև մարմնակազմական և բնախոսական հարցեր, որոնց մասին պարզաբանումները դարձյալ քաղված են Նեմեսիոսի երկից: Վերջինիս ազդեցությունն ակնառու է հատկապես հոգու բնության, հոգու և մարմնի հարաբերակցությանն առնչվող հարցերի քննարկման ընթացքում: Որոտնեցին՝ հոգու մասին անտիկ և վաղ միջնադարյան ուսմունքները ներկայացնելիս, Նեմեսիոսի ոգով է վերլուծում և գնահատում դրանք: Իսկ չորս տարրերի հարցը քննարկելիս, նա Նեմեսիոսից քաղված հատվածները լրացնում է Պլատոնի «Թիմեոս»-ի հայերեն հնագոյն թարգմանությունից վերցրած մեջբերումներով, որոնք տրվում են որպես լուծումներ: Գրիգոր Տաթևացին իր աշխատություններում, և հատկապես՝ «Գիրք Հարցմանց»-ում, բնափիլիսոփայական, տիեզերագիտական, կազմախոսական, կենդանաբանական ու բնագիտական հարցերը դիտարկում է՝ հաճախակի հենվելով Նեմեսիոսի գրքից վերցրած տեղեկությունների վրա: Երբեմն էլ հայ մտածողներն իրենց հայեցողությամբ խմբավորում են բովանդակային ընդհանրություններ ունեցող բնագրային հատվածները՝ դրանք գուգահեռելով աստվածաշնչյան մտքերի հետ:

Այսպիսով, Նեմեսիոսի գրքի ներկայացվածությունը հայ մտածողների երկերում, տարբեր, հատկապես բնափիլիսոփայական, մարդաբանական, բնախոսական ու հոգեբանական հարցերի լրասրանման կապակցությամբ Նեմեսիոսյան գաղափարների գործածությունը վկայում է առ այն, որ հոյն մտածողի գիրքը ծառայել է որպես սկզբնադրյուր և նպաստել է միջնադարյան հայ փիլիսոփայական մտքի զարգացմանը:

«**Նեմեսիոս «Մարդու բնության մասին»** երկի թարգմանական բնագրում առկա տեսական-փիլիսոփայական եզրերի վերլուծություն» Ենթագլուխում վերլուծվում են Նեմեսիոսի գրքի հայերեն բնագրում ընդգրկված բառեզրերը, որոնք համեմատելով հոնքարեն համարժեքների, ինչպես նաև արդի հայերեն ծևերի հետ, հաճախ ակնհայտ է դառնում հայ թարգմանիչների ազատ և ստեղծագործ մոտեցումը սկզբնագրին՝ չնայած թարգմանության բառացիությանը:

Երկի հայերեն բնագրում կան, ինչպես հունարենից պատճենված բավական հաջող հունաբանություններ (աշխարհագրծությին, աշխարհական, բարեխսառնությին,

բարեգորհմութիւն, դատնամաղձեայ, զգայակցութիւն, ինքնամապոյց, գրեսակարար, կրակից, ճաճանչակցութիւն, երկուրեքն և այլն), այնպէս էլ հազվադեպ հանդիպող հունարենից փոխառված կամ, ավելի ճիշտ, տառադարձված բառեր: Վերջիններս կամ կենդանիների անվանումներ են՝ (պինայ, կարկինոս, ասդաքոս, դեկտերէսք, սիպէք, կոռկորդիլոս), կամ երկրաչափական եզրեր՝ (իկոսաէդրոն, կոնս, կիրիկոն, որդաէդրոն, պիտամիդ, սկալինէանցն եռանգին): Սակայն Նեմեսիոսի գրքի թարգմանության մեջ չկա գոնե մեկ փոխառյալ փիլիսոփայական եզր: Զարմանալի է հիմնարար գաղափարներ արտահայտող և մինչև այժմ էլ միջազգայն կիրառում ունեցող հունարեն եզրերի փոխարինումը հայերեն բառերով (տարր, անձ, շոնչ, տիեզերք, կիրք, ախտ, հայել, համեմատ, նաև՝ երակ, շնչերակ և այլն): Այս երևոյթը կարող է բացատրվել միայն այն հանգամանքով, որ վաղ միջնադարում հայերն արդեն ունեին բավականաչափ ծևավորված և տարածված գիտական եզրեր: Իսկ ծևավորված եզրաբանությունը սովորաբար խոսում է նաև այն գիտությունների տարածվածության մասին, որոնք ներկայացվում են այդ եզրերով: Հետևաբար, վաղ թրիստոննեական շրջանի հայերեն, այդ թվում՝ թարգմանական բնագրերի, ի մասնավորի՝ Նեմեսիոս Եմեսացու «Մարդու բնության մասին» երկի, ուսումնասիրությունը կարող է կարևոր տեղեկություններ տալ նաև նախաքրիստոննեական Հայաստանում բնափիլիսոփայության և բնական գիտությունների մակարդակի, դրանց տարածվածության մասին՝ ոչ միայն իր շատ արժեքավոր մեկնությունների, այլ նաև երկի թարգմանության մեջ գործածված բառամթերքի շնորհիվ:

«Եզրակացության» մեջ ամփոփում են հետազոտության արդյունքները: Ուսումնասիրելով Նեմեսիոս Եմեսացու «Մարդու բնության մասին» երկը, վերլուծելով ու գնահատելով նրա փիլիսոփայական հայացքները և դրանց ազդեցությունը հայ գիտափիլիսոփայական, ի մասնավորի, բնագիտական, բնափիլիսոփայական և մարդաբանական մտքի զարգացման վրա, արվում են հետևյալ եզրակացությունները՝

- Հիմնավորվում է այն միտքը, որ հանրագիտարանային բնույթի իր երկում ներկայացնելով միևնույն հարցի վերաբերյալ տարբեր տեսակետներ, Նեմեսիոսն ամենսին խնդիր չի դնում դրանց հիման վրա ստեղծելու փիլիսոփայական տեսություն: Նա ներկայացնում է այս կամ այն հարցի վերաբերյալ տարբեր տեսակետներ և արտահայտում իր վերաբերմունքը դրանց նկատմամբ: Այս առումով Նեմեսիոսն ոչ թե էկլեսիկ, այլ ավելի շուտ հավաքաբան մտածող է, ով համառոտ ներկայացնելով նշանավոր փիլիսոփաների մոտեցումները տարբեր հարցերի վերաբերյալ, դրանով իսկ միջնադարյան քրիստոննեական մշակույթ է փոխանցել անտիկ և վաղ միջնադարյան գիտափիլիսոփայական ժառանգության զգալի մասը:

- Թեև Նեմեսիոսը հետևում է աստվածաշնչյան ճշմարտություններին, այնուհանդեք նրա հայացքներում գերակշռում է բանապաշտական մոտեցումը, իսկ ընդհանուր առմամբ նա ծգուում է անտիկ բանապաշտական ավանդույթը համարել քրիստոննեական հավատքի սկզբունքների հետ, կրոնական ճշմարտությունները հիմնավորել ուղիղոնալ փաստարկներով:

- Նեմեսիոսը կարծում է, որ Աստծո ստեղծած տիեզերքը մի ամբողջական կենդանի օրգանիզմ է, որին բնորոշ են կարգավորվածությունը, համաշափությունն ու

Ներդաշնակությունը: Պաշտպանելով արարչագործության սկզբունքը՝ նա միաժամանակ ընդունում է գոյի լինելության, տիեզերական երևոյաների կազմավորման աստիճանական ընթացքը՝ դրան ներհատուկ բնական օրինաչափություններով:

-Պաշտպանելով քրիստոնեական մարդարանության հիմնարար սկզբունքները, Նեմեսիոսը կարծում է, որ աստվածաստեղ տիեզերքում մարդն ունի առանձնահատուկ կարգավիճակ: Նա մի կողմից արարչագործության պասկն է, Աստծո նմանությանը ու պատկերով ստեղծված էակ, իսկ մյուս կողմից՝ Փոքր աշխարհ է, որն իր մեջ է ամփոփում է Կեցության բոլոր շերտերը, բանականն ու անբանականը, զգային և իմանալին և իր գոյությամբ զարդարում տիեզերքը:

-Նեմեսիոսի երկում ծավալուն ներկայացված են հոգու մասին անտիկ ուսմունքները, որոնց վերաբերյալ տեղեկությունները նա հիմնականում քաղել է Արիստոտելի «Հոգու մասին» երկից: Բայց մարդկային հոգու էության և բնույթի մասին հարցերում նա հիմնականում հետևում է Պլատոնի հայացքներին: Նեմեսիոսը ընդունում է հոգու նախագոյության գաղափարը՝ հիմքում դնելով պատոնական միտքն այն մասին, որ գիտելիքը վերհուց է, իսկ դրա կրողը՝ մարմնից ավելի վաղ գոյություն ունեցող հոգին:

-Ցոյց տալով Նեմեսիոսի երկի տարածվածությունը հայ միջնադարյան գրականության մեջ, ներկայացվում է դրանց ազդեցությունը միջնադարյան հայ փիլիսոփայական մտքի զարգացման վրա: Այս նպատակով, երկի բովանդակությունը, կառուցվածքը, հեղինակի բնափիլիսոփայական, մարդարանական պատկերացումները լուսաբանելուց բացի, հետազոտվել է նաև Նեմեսիոսի գործի հայերեն թարգմանության ժամանակը, հանգամանքները, բառակազմը, միջնադարյան հայերեն մեկնությունները, ներկայացվածությունը հայ մատենագիրների երկերում:

-«Մարդու բնույթյան մասին» երկը հայերեն է թարգմանվել դեռևս VIII դարում, հինարան դպրոցի վերջին շրջանում, որից հետո մեկնարանվելով, ուսուցանվելով և տարածվելով հայկական գիտական շրջանակներում, այն դարձել է ոչ միայն հայկական միջավայրում անտիկ գիտելիքի տարածման աղբյուր, այլ նաև միջնադարյան հայ փիլիսոփայության զարգացման տեսական ակունքներից մեկը:

-Ատենախոսության մեջ լուսաբանվել են, ինչպես Նեմեսիոսի գործի միջնադարյան անանուն մեկնությունները, այնպես էլ ցոյց է տրվել դրա նկատմամբ հայ մեկնիչների վերաբերմունքի առանձնահատկությունները: Նեմեսիոսի երկի հայերեն մեկնությունները կարևոր տեղեկություն են տալիս միջնադարյան հայ հեղինակների գիտելիքների և հետաքրքրությունների շրջանակի, նրանց ինքնուրույնության աստիճանի: Ինչպես նաև նրանց բնագանցական, իմացարանական և հոգեբանական հայացքների մասին:

-Հետազոտությունը հնարավորություն է տալիս որոշակի պատկերացում կազմելու հայ փիլիսոփայական եզրաբանության զարգացման մասին: «Մարդու բնույթյան մասին» գործի հայերեն բնագրում կիրառված եզրաբանությունը, որը գրեթե չի ներառում օտար փոխառություններ, հետագայում գործածվել և շրջանառվել է բազմաթիվ հայ մատենագիրների երկերում: Ընդ որում, հիմնարար գաղափարներ արտահայտող և մինչև այժմ էլ միջազգային կիրառում ունեցող հունարեն եզրերի փոխարինումը հայերեն համարժեքներով, կարող է բացատրվել այն հանգամանքով, որ մինչ երկի

թարգմանությունը հայերն արդեն ունեին գործածվող գիտական եզրեր, ինչը վկայում է Հայաստանում բնափիլխոփայության և բնական գիտությունների զարգացման որոշակի մակարդակի մասին:

- Հիմք ընդունելով ինչպես Նեմեսիոսի Երկի ներկայացվածությունը միջնադարյան հայ փիլխոփաների ստեղծագործություններում, այնպես էլ բազմաթիվ անանուն մեկնությունները, հիմնավորվում է, որ Նեմեսիոսի գիրը.

ա. Կարևոր ազդեցություն է ունեցել միջնադարյան հայ փիլխոփայական, այդ թվում՝ բնափիլխոփայական և մարդաբանական մտքի զարգացման վրա,

բ. Այն հանդիսացել է անտիկ գիտափիլխոփայական ժառանգության փոխանցման միջոց և անտիկ փիլխոփայության յուրացման սկզբնաբյուր,

գ. Երկի հունարան հայերենով թարգմանական բնագիրը հարստացրել է հայերեն փիլխոփայական լեզուն նոր եզրույթներով ու արտահայտություններով:

Նեմեսիոսի Երկը չափազանց կարևոր է ինչպես անցյալի հայ մշակութային ժառանգության լուսաբանման ու իմաստավորման, այնպես էլ հայ տեսական-փիլխոփայական մտքի զարգացման համապատկերն ունենալու առումով:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հոդվածներում և մենագրություններում.

1. Մոսիկյան Կ., Նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան մարդոյ» Երկի հայերեն թարգմանության բառակազմը, Բանքեր Մատենադարանի N 24, 2017, էջ 176-189:

2. Մոսիկյան Կ., Նեմեսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ» Երկը հայ միջնադարյան գրականության մեջ, Բանքեր Մատենադարանի № 26, 2018, էջ 177-206:

3. Մոսիկյան Կ., Նեմեսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ» Երկի միջնադարյան հայ մեկնությունները. Բանքեր Մատենադարանի № 28, 2019, էջ 244-257:

4. Նեմեսիոս Եմեսացի, Յաղագս բնութեան մարդոյ, առաջարանը, համեմատական բնագիրը և ծանոթագրությունները Կ. Մոսիկյանի, Երևան, 2019, 512 էջ:

5. Նեմեսիոս Եմեսացի, Մարդու բնության մասին, գրաբարից թարգմանությունը, առաջարանը և ծանոթագրությունները Կ. Մոսիկյանի, Երևանի, 2021, 480 էջ:

6. Մոսիկյան Կ., Մարդաբանական հայացքների քննարկումները Նեմեսիոս Եմեսացու «Մարդու բնության մասին» Երկի հայերեն անանուն մեկնություններում, ԵՊՀ Աստվածաբանական և կրոնագիտական հոդվածների ժողովածու, 2022 (ը), հրատ. 2022, 12. 27, էջ 116-134:

<https://rb.gybnpt>

<http://publications.ysu.am/wp-content/uploads/2022/12/007-Mosikyan-Karine.pdf>

7. Մոսիկյան Կ., Հավատքի և գիտության հարաբերակցության հարցը Նեմեսիոս Եմեսացու «Մարդու բնության մասին» Երկում, ՀՊՄՀ Հայագիտական հանդես N2 (61), հրատ. 2023, 04.28, էջ 81-97:

<https://armenianstudies.aspu.am/index.php/armenianstudies>

МОСИКЯН КАРИНЕ АРТУШОВНА

ФИЛОСОФСКИЕ ВЗГЛЯДЫ НЕМЕСИЯ ЭМЕССКОГО И ИХ ВЛИЯНИЕ НА РАЗВИТИЕ СРЕДНЕВЕКОВОЙ АРМЯНСКОЙ ФИЛОСОФСКОЙ МЫСЛИ

Диссертация на соискание ученой степени кандидата философских наук по
специальности 00 01 «Философия».

Защита состоится

20.09.2023, 14⁰⁰

На заседании специализированного совета по философии:

013

В основе диссертации положено исследование книги «О природе человека» одного из известных отцов Восточной церкви Немесия Эмессского, и определение ее влияния на развитие средневековой армянской философии, в частности, антропологии и натурфилософии.

Средневековая армянская литература многочисленными нитями связана с переводными памятниками, на основе которых сформировались мировоззрение и научные представления средневековых армянских авторов. В частности, для развития армянской натурфилософии и антропологии важнейшее значение имел труд епископа Немесия Эмессского «О природе человека». Эта книга многогранный памятник о природе человека, о его материальных, духовных и чувственных слоях, его месте и роли в природе, взаимоотношении с миром, о роке, промысле и самоопределении. Книга была переведена на древнеармянский в VIII веке. Она оказала важнейшее влияние на средневековую армянскую культуру и философию, а также на формирование философских, антропологических, психологических и нравственных взглядов армянских мыслителей. Цитаты из книги Немесия довольно часто встречаются в произведениях различных средневековых авторов: Ованеса Саркавага, Ованеса (Плуз) Ерэнкаци, Ована Воротнецца, Григора Татеваци и других. Сохранилось также множество толкований трактата Немесия, отличающихся друг от друга по объему, стилю и смысловым восприятиям. Армянские толкования переводных научных трудов дают нам обильный материал для представления гносеологических подходов, свойственных армянскому средневековому мышлению. Следовательно, толкования этого (и любого научного) труда позволяют представить также восприятие, профессиональную лексику, гибкость и логику мысли армянских авторов-толкователей, понять, насколько они владеют рассматриваемыми ими научными проблемами. Несмотря на это, армянские историки-философы не изучали влияние книги Немесия, тем более ее толкования, на развитие армянской философской мысли разных веков.

В настоящей диссертации освещены философские взгляды Немесия и рассмотрено их влияние на развитие средневековой армянской теоретико-философской мысли. Мы сочли полезным представить отдельные части текста в сравнении их средневековыми толкованиями и схолями армянских авторов, поясняющие принятый в ту или иную эпоху смысл отдельных терминов, понятий и выражений.

Диссертация состоит из двух разделов. В первом разделе представлена биография Немесия Эмесского, структура, содержание, интерес к его книге «О природе человека» в разные периоды, а также изучение основных положений его натурфилософии. Вторая часть посвящена армянскому переводу трактата, ее значению для развития армянской натурфилософии, ее презентации в армянской средневековой библиографии и интерпретациям армянских авторов, а также анализу и расшифровке армянских философских терминов и понятий в армянском переводе.

На основании презентации книги Немесия в трудах средневековых армянских философов, а также многочисленных анонимных комментариев обосновывается, что древнеармянский перевод книги Немесия: а) оказал значительное влияние на развитие средневековой Армянской философии, особенно на натурфилософскую, антропологическую, психологическую и этнографическую мысль, б) явилась источником передачи древнего научно-философского наследия, его интериоризации и освоения, в) обогатила армянский философский язык новыми терминами и выражениями. Диссертация также дает возможность более четко представить истоки и развитие как естествоведческих и антропологических знаний, так и натурфилософских терминов в средневековой армянской философской мысли.

Диссертация имеет как теоретическое, так и практическое значение. Исследование дает более полное представление об истоках средневековой армянской философской мысли, становлении и развитии философской терминологии, армяно-византийских культурно-философских связях и взаимодействиях. Собранный и проанализированный теоретический и фактический материал может быть использован в исследованиях истории средневековой армянской натурфилософской, естествоведческой и антрополого-психологической мысли. Материалы диссертации могут быть использованы в университетских курсах «История философии», «История армянской философии», «История армянской культуры» и «История армянской психологии».

MOSIKYAN KARINE ARTUSH

PHILOSOPHICAL VIEWS OF THE NEMESIUS OF EMESA'S
AND THEIR INFLUENCE ON THE DEVELOPMENT OF MEDIEVAL ARMENIAN
PHILOSOPHICAL THOUGHT

Thesis for the degree of candidate of philosophical sciences
in the specialty 00 01 "Philosophy"

Defense will take place

20.09.2023, 14⁰⁰

At a meeting of the Specialized Council on Philosophy:

013

The basis of the dissertation is the study of the book «*On Human Nature*» by one of the famous fathers of the Eastern Church of Nemesius of Emesa's, and the definition of its

influence on the development of medieval Armenian philosophy, in particular, anthropology and natural philosophy.

Medieval Armenian literature is connected with translated monuments by numerous threads, on the basis of which the worldview and scientific ideas of medieval Armenian authors were formed. For the development of Armenian natural philosophy and anthropology, the work of Bishop Nemesius of Emesa's "On Human Nature" was very important. This book is a multifaceted monument about the nature of human being, about his material, spiritual and emotional layers, his place and role in nature, his relationship with the world, about rock, craft and self-determination. The book was translated into ancient Armenian in the 8th century. It had a great influence on medieval Armenian culture and philosophy, as well as on the formation of philosophical, anthropological, psychological and moral views of Armenian thinkers. Quotes from the book of the Nemesius are quite often found in the works of various medieval authors: Hovhannes Sarkavag, Hovhannes (Pluz) Yerznkatsi, Hovan Vorotnetsi, Grigor Tatevatsi and others.

A number of interpretive treatises of Nemesius' book have also been preserved, differing from each other in terms of volume, style and semantic perception. Armenian interpretations of translated scientific works give us abundant material for the presentation of epistemological approaches peculiar to Armenian medieval thought. Consequently, the interpretations of this (and any scientific) work allow us to present also the perception, professional vocabulary, flexibility and logic of thought of the Armenian authors-interpreters, to understand how much they master the scientific problems considered by them. Despite this, Armenian historians-philosophers did not study the influence of the Nemesius book, let alone its interpretation, the development of Armenian philosophical thought in different centuries.

In this dissertation, of the Nemesius' philosophical views are covered and their influence on the development of medieval Armenian theoretical and philosophical thought is considered. We found it useful to show the individual parts of the text in comparison with medieval interpretations of Armenian authors, which explain the meaning of certain terms, concepts and expressions accepted in one or another era.

The dissertation consists of two sections. The first section presents the biography of Nemesius of Emesa's, structure, content, interest in his book «On Human Nature» in different periods, as well as the study of the main principles of his natural philosophy. The second part is devoted to the Armenian translation of the treatise, its significance for the development of Armenian natural philosophy, its representation in the Armenian medieval bibliography and interpretations of Armenian authors, as well as the analysis and decoding of Armenian philosophical terms and concepts in the Armenian translation.

Based on the representation of the Nemesius' book in the works of medieval Armenian philosophers, as well as numerous anonymous interpretations, it is justified that the ancient Armenian translation of the Nemesius' book. a) had a significant impact on the development of medieval Armenian philosophy, especially on natural-philosophical, anthropological and psychological thought, b) was a source of transmission of the ancient scientific-philosophical heritage, its interiorization and mastery, c) enriched the Armenian

philosophical language with new terms and expressions. The dissertation also gives an opportunity to clearly present the origins and development of both natural and anthropological knowledge and natural philosophical terms in the medieval Armenian philosophical thought.

The dissertation has both theoretical and practical significance. The study gives a more complete understanding of the origins of medieval Armenian philosophical thought, the formation and development of philosophical terminology, Armenian-Byzantine cultural-philosophical connections and interactions. Collected and analyzed theoretical and factual material can be used in research on the history of medieval Armenian natural-philosophical, naturalistic and anthropological-psychological thought. Dissertation materials can be used in university courses: "History of Philosophy", "History of Armenian Philosophy", "History of Armenian Culture" and "History of Armenian Psychology".